



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 25 ԱՊՐԵԼ 1887

ԹԻԻ 3870

ՄԱՍՆԱՆԱՆԱՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրեալը զրկելու է առ մատակարարութիւն Սրբեկեղի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուփեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name (Ա. Ա.), Address (Ուղղւոյն). Includes entries for (ՄՇԱԿ) and (ՄՇԱԿ) with addresses in Constantinople.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 24 ԱՊՐԵԼ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՀԱՅՔ ԵՒ ՌՈՒՍՔ

Այսօր կը հրատարակենք համառօտութիւն մը այն տեղեկութեանց զորս ուսու երեւելի ճանապարհորդ մը Հայոց մասին հաղորդած է Բեդերսպուրկի Կայսերական Աշխարհագրական ընկերութեան Մարտ 4 ի նստին: Ճանապարհորդին տեղեկութիւններն, հիմնուած գրական գիտութեանց վրայ, յոյժ նպաստաւոր են մեզ համար: Առաջին անգամ չէ որ ուսու գիտնականներն համակրանք կը խօսին մեզ համար. դեռ վերջերս Պ. Խրոմոսն, Էրօֆէտը Խարքովի համալսարանին մէջ, վերին աստիճանի գոհացուցիչ դասախօսութիւն մը կ'ընէր Հայոց համար:

Ռուս գիտնականներու կողմանէ Հայոց մասին յայտնուած համակրանաց համար պէտք է ուրախ լինենք, վասն զի գրաւական մ'է այդ որ ուսու ժողովուրդն հաւան չէ իւր շինքներու հայատեաց քաղաքականութեան: Թէպէտեւ Կատկովներ, Մալախովներ, եւ ուրիշ խաւարամիտներ մերթ մերթ իրենց հարուածները կը տեղան Հայոց

դէմ: Բայց ողջամիտ, լուսաւորեալ մասը բոլորովին տարբեր կը մտածէ: Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մ'է եւ Ռուսիոյ Հայերն այդ ժողովուրդի սէրն ու յարգանքը դրաւելու համար ամէն միջոց ի գործ դնելու պարտական են: Հասարակաց կարծիքը պէտք է Հայոց համար նպաստաւոր լինի: Պէտք չէ ենթադրել որ Ռուսիոյ մէջ հասարակաց կարծիքը գոյութիւն չունի. ընդհակառակն, պաշտօնեայ, նախարար, Կայսր ամէն ոք մեծ կարեւորութիւն կ'ընծայէ հասարակաց կարծեաց:

Ռուսիոյ Հայք մինչեւ ցարդ կարող եղած են լաւ դիրքի մը մէջ գտնուիլ ուսու ժողովուրդի նկատմամբ: Երբեմն ուսու ժողովուրդի համակրանքը Կովկասու լեռնականաց համար էր. Լէրմոնզովի բանաստեղծութիւնները ժողովրդական բրած էին Կովկասու լեռնականներն ու մարտիրոսութեամբն արժանի են ո'չ թէ միայն Ռուսաց այլ բոլոր աշխարհի սիրոյն եւ զարմացման: Բայց բանաստեղծական յիշատակ մը միայն կը մնայ, քանի որ այդ տարաբարագր լեռնականներն այլ եւս իրենց սուրբ գործածելու հարկինմէջ չեն: Ասոր փոխարէն ընդհանուր ուշադրութիւն կը նուիրուի հետզհետէ Կովկասու այն ազգաբնակչութեանց ոյք օժտուած են իրթական եւ տնտեսական յատկութիւններով եւ որոց աշխատութիւնը կը նպաստէ Կովկասու զարգացման: Հայերը կը գրաւեն Կովկասու եւ Անդր-Կովկասու մէջ առաջին տեղն իւր զարգացեալ եւ զարգացնող ժողովուրդ, եւ Ռուսք ոյք արդէն շատ պարտական են Հայոց՝ չունին մասնաւոր պատճառ մը առեւթիւնն սնուցանելու ընդդէմ Հայոց:

Իրաւ է թէ դժուար վայրկեաններ կ'անցան են այժմ Ռուսիոյ բոլոր փոքր ազգութիւններն, իրենց վիճակը միսթիւնարական երեւոյթ մը չընծայեր, բայց եւ այնպէս համբերելու, տոկալու են: Ժամանակն իրենց համար կ'աշխատի: Այս կացութիւնն երկար չկրնար տեւել ամէն հեռատես անձ կը դիտէ թէ բարեփոխման ժամանակը կը մօտենայ: Կառավարական ձեւի մը փոփոխութիւնը շատ հաւանական է, բայց այդ փոփոխութիւնը լինի թէ ոչ, Ռուսիա կ'ըմբռնէ թէ իրեն համար ձախողութեանց թուական մը պիտի բանան այն հարկւրաւոր աղգերն ոյք վերաւորուած իրենց ամէնէն նուիրական զգա-

ցումներուն մէջ, վնասուած իրենց նիւթական կացութեան մէջ, առեւթիւն կը տածեն ընդդէմ Ռուսիոյ: Ընդհակառակն այդ աղգութիւնները տեսնելով իրենց աղգութիւնն ու կրօնքն ապահովուած, տեսնելով որ կառավարութիւնը զիրենք չուզեր փճացնել տնտեսական միջոցներով իրենց սրտէն կը կապուին մեծ երկրին հետ՝ որուն բարոյական ու նիւթական շահերն իրենց շահուն հետ մի եւ նոյն պիտի նշկատեն: Իրենց սիրտը, իրենց դրամն, իրենց արեւը սիրայօժար պիտի նուիրեն այն պետութեան որ իրենց ազգային գոյութիւնը կը պահպանէ եւ իրենց նիւթական վիճակը գոհացուցիչ կացութեան մէջ կը դնէ:

Կովկաս՝ իւր աշխարհագրական եւ պատմական բացառիկ դիրքովն ամենամեծ ուշադրութեան առարկայ եղած է եւ պիտի լինի: Կովկասի մէջ առաջին տեղն Հայոց է. ըստ բաւականին լաւ նիւթական վիճակի մէջ մտաւորապէս զարգացած, քիչ թէ շատ կարգապահութեան վարժած, այժմ զինուորական օրինաց չնորհիւ Հայերն աւելի առնական լինելու եւ աւելի առաւելութիւններ ստանալու իրաւունքն ալ պիտի ունենան: Եւ այսպէս լաւ պատրաստուած ժողովուրդ մը Ռուսիոյ մէջ իրեն համար նշանաւոր տեղ մը պիտի գրաւէ, կը բաւէ որ Հայերը տոկան, աշխատին, խոնարհ չլինին Ռուսաց առաջ, եւ լուսաւորեալ դասուն համակրանացն արժանանալու ջանքեր ընեն:

Ա. Ա.

Ա.Ձ.Գ.Ա.Յ.Ի.Ն ԺՈՂՈՎ

Նրէկ Աղգ. ժողովը գումարեցաւ զըլխաւորաբար Ս. Պատրիարքի հրաժարականի խնդրոյն համար: Ատենապետաց Գիւանն հարկ տեսած էր խնդիրը լուսաբանել յատուկ տեղեկագրով մը: Նրեւոյստաններէ ռմանք գիտողութիւն ըրին թէ Ատենապետաց Գիւանը պարտականութիւն չունէր տեղեկագիր բերելու: Բայց այդ վերջի խնդիր է, պատասխանեցաւ:

Վիճաբանութիւնը չեղան, վասն զի Գիւանը տրամադիր չէր շատ խօսեցնել ի նրպատ հրաժարականի բերան բացողները: Մի կողմ միջոցէ վերջ պատգամաւորութիւն մը գնաց Ս. Պատրիարքին խնդրելով որ հրաժարականն ետ առնու եւ Ն. Սրբազնութիւնն առժամանակեայ կերպով ետ առաւ հրաժարականը:

Պ. ԵԼԻՍԵԵՎ ԵՒ ՀԱՅՔ

Հայոց նկատմամբ կովկասեան իշխանութեանց հետեւած քաղաքականութեան մասին ցաւալի տեղեկութիւններ հաղորդելու տխուր հարկին մէջ գտնուած ենք եւ կը գտնուինք միշտ, բայց Հայոց համար մեծ մխիթարութիւն է տեսնել որ ուրու ժողովուրդի զարգացած դասն, իւր մեծամասնութեամբ, համակարծիք չէ ուր չինովնիկներու եւ չփափագիր Հայոց անուան աշխարհիս վրայէն առհետ ջնջման։ Այդ զարգացած դասուն մեծամասնութեան ազնուախոհ մտածութեանց իբր թարգման կրնանք նկատել երիտասարդ բժիշկ Պ. Ելիսէեւ որ մեծ հաւատքով եւ շատ համակրանք խօսած է մեր մասին Բեդերսպուրկի Կայսերական աշխարհագրական ընկերութեան այս տարւոյ Մարտ 4-ի նստին։

Պ. Ելիսէեւ ի Թուրքիա բրած ճանապարհորդութեան վերադարձած լինելով հաղորդած է Կայսերական Աշխարհագրական ընկերութեան իւր գիտական հետազոտութեանց արդիւնքն։ Մշակ Բեդերսպուրկէն ընդարձակ թղթակցութիւն մը կը հրատարակէ այդ նստի մասին. այդ թղթակցութեան կը քաղենք կարեւոր տեղեկութիւններ թէ՛ Պ. Ելիսէեւի եւ թէ՛ նորա յայտնած համազումներու վերաբերմամբ։

Ռուս ժողովուրդը մեծապէս կը յարգէ այդ համբաւաւոր ճանապարհորդ բժիշկ Ալէքսանդր Վասիլեւիչ Ելիսէեւ, որ դեռ հազիւ քսան եւ ութ տարեկան ու արդէն մէծ համբաւ կը վայելէ գիտական աշխարհի մէջ։

Ճանապարհորդն իւր ուղեւորութեանց տպաւորութիւնները տպագրած է բազմաթիւ յոգեւածներով եւ չորս մեծածաւալ հատորներով։ Նորա գեղեցիկ հնչիւնակութեանց մէջ կը տեսնուին Դեպէլիւն, Ապառաժ Արաբիյ Բնիկներ, յԱշխարհն Դուարէկներ, Տըսեայ Կերախայ Էրայ, Երջապառնէն Ի Սահա, Ռուս Կապառնիներ, հեռ յերկէն Աւերապ, Այս վերջին գրքի մէջ հեղինակը կը պարզէ յերեւոյթ մ գնացող ուրու ուխտաւորաց տարաբաղդ վիճակը։ Տխուր նկարագիրներն ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին եւ Ռուսաց տէրութիւնն յուզուելով միջոցներ ձեռք առաւ բարեօրէն համար ուխտաւորաց ոգորմելի վիճակը։

Պ. Ելիսէեւի մասին Ռուսը կը հաւատան որ ճանապարհորդ ծնած է։ Դեռ տակաւին դպրոցի աշակերտ՝ ամբողջ արձակուրդներ կը զոհէր ուղեւորութեանց։ Այդ թողութեան Բեդերսպուրկէն եւ կ'երթար Ռուսաստանի ամէն խորշերը տեսնելու։ Եւ պէտք է հաւատաւ որ նա ահապին Ռուսաստանի ամէն կողմերը կ'այցելէր ստորով երթալով։ Եւ ուրիշ կերպ չէր կրնար ընել։ Երբ կը թողար դպրոցն որպէս զի ճանապարհորդէ, գրպանին մէջ հազիւ թէ 10-20 ռուպլի (մօտ մէկ երկու օսկի) ստակ կ'ունենար, եւ այդ գումարով պէտք էր ճանապարհորդել ամիսներ։

Աւելի մեծ գումար չէր կարող ունենալ պատանի Ելիսէեւը, վասն զի աղքատիկ ընտանեաց զաւակ էր։ Մնած էր Ֆինլանդիայի Սվեաբորգ ամրոցն. իւր հայրը դիւնուր էր, վարած էր ուրս զինուորի թափառական կեանքն, եւ այդ կեանքը տպաւորութիւն թողած էր նորա զաւակին երեւակայութեան վրայ։ Շատ կանուխէն ընտելացած անտառի եւ հրացանի հետ, յան-

դուզն եւ դիւրագգած պատանին վառուած էր աշխարհներ եւ երկիրներ տեսնելու տենչանքով։ Հայրը ծերացած մեռաւ զինուորական ծառայութեան մէջ եւ թողուց անոր անօգնական իւր զաւակները։ Պատանին Ելիսէեւ պարտաւոր էր հոգալ ոչ թէ միայն իւր անձն այլ նաեւ իւր փոքր քոյրերն ու եղբայրները։ Մտաւ կեանքի կըսուց մէջ եւ այդ կուրոյն մէջ հանդիսացաւ զօրեղ, եռանդուն եւ գործունեայ մրցող։

Տոկուն բնաւորութեամբ, վառ երեւակայութեամբ, յանդուգն հոգեով օժտուած եւ գիտութեան մեծաքանակ պաշարով պատրաստուած փորձառու այդ ճանապարհորդն է ահա որ այնքան համակրանք խօսած է մեզ համար մարտի 4-ին։

Պ. Ելիսէեւ Բեդերսպուրկի Աշխարհագրական եւ Պաղեստինական ընկերութիւններէն ընդունելով դրամական օժանդակութիւն, անցեալ տարի ճանապարհ կ'իյնայ Փոքր-Ասիայէն Պաղեստին երթալու ուղեւորական ծրագրով եւ անցեալ տարի օգոստոսին Թիֆլիզ կ'երթայ եւ անտի կ'անցնի Երեւան։ Սակայն թուրք-ուսական սահմանագլխոյ վիճակը չներեր նմա շարունակել իւր ուղեւորութիւնն այդ ճանապարհով եւ կը վերադառնայ ի Թիֆլիս։ Անտի Պաղեստին ճանապարհով կուգայ Կ. Պոլիս եւ աստ ստանալով յանձնարարական նախնիներ կ'երթայ Ալէքսանդրիա եւ անտի Հալէպ, Հեռզեմէ կ'այցելէ Մարաշ, Անթիպա, Մալաթիա, Քարթերզ, Կապան, Գատէն, Սեբաստիա, Եւդոկիա, Ամասիա, Սամսոն, Պաֆրա եւ։

Ամէն ուրեք բժիշկ ճանապարհորդը սիրալիւ ընդունելութիւն կը գտնէ տեղացիներէն եւ այդ ընդունելութեան գաղտնիքն իւր անուան մէջ չէ նորա անունն անշուշտ ոչ ոք լսած էր այդ գաւառներու մէջ, եւ սակայն ամէն ոք նորա շուրջը կուգայ, վասն զի ճանապարհորդ բժիշկը միանգամայն դեղագործ մ'էր։ Պ. Ելիսէեւ իւր հետ կը տանէր ճանապարհորդական շարժուն դեղանոցն եւ ամէն իրեն դիմողներու կուտար ձրիաբար խորհուրդներ եւ դեղեր։ Եւ շնորհիւ իւր այս մարդասիրութեան եւ միանգամայն գիտութեան, կարող կը լինէր մեծ օգուտներ քաղել ժողովուրդէն որ անկասկած կը գիմէր նմա։ Նա կը կատարէր դէմքի եւ գագաթի վրայ մարդաբանական չափումներ, եւ կը հաւաքէր մեծ պաշարներ ազգագրական եւ աշխարհագրական գիտութիւններու, ոյք անշուշտ պիտի հրատարակուին։ Երբ այն ճանապարհորդական մանրամասնութիւններն հրատարակուին, պիտի ջանանք ծանօթացնել զայնս Մասիս ընթերցողաց։ Հայոց ուսումնասիրութիւնն Հայաստանի մէջ ընդհանրապէս են լուրջանշուղ զեփիւռը, գեղածիծաղ ծովուն վէտ վէտ ալիքները, վանքի մը աւերակներն ուր կը լուսին սեւ բուլին վայրէմները։ Դրական գիտութիւններով օժտուած հայ մը Հայաստանն ուսումնասիրելու կարող չէ եղած։ Ամէն ինչ բանաստեղծական աւելնով ծանօթ է մեզ։

Պ. Ելիսէեւ նախ կը խօսի Տաճկաց վրայ եւ յետոյ անմիջապէս կ'անցնի Հայոց։

«Հայերը կը դասենք, կ'ըսէ, Տաճիկներէ վերջ, թէպէտեւ սոքա աւելի տարածուած լինելով Փոքր-Ասիոյ մէջ, գուցէ աւելի բազմաթիւ լինին քան թէ միւս բոլոր ազգերն այս երկրին մէջ որ այնքան հարուստ է ազգագրական զանազան տարբերքներով։ Հայն, որպէս եւ հելլենացին, կենդանի հանգոյց կը կազմէ Արեւմուտքի եւ Արեւելքի մէջ մարդկութեան կենաց երկու նշանաւոր

վայրկեաններուն, երբ Արեւմուտքի քաղաքակրթութիւնը կը թափանցէ մինչեւ Արեւելքի սիրտն, զայն արթնցնելու համար իւր դարեւոր բունէն։ Հայոց դերն այժմ աւելի պատուաւոր է, որովհետեւ նոքա կը տարածեն քաղաքակրթութիւնը մինչեւ այն լեռներն ոյք հիւսիսէն կը ներփակեն Միջագետքը։

«Բայ ի այդ նշանաւոր պաշտօնէն, հայերն արժանի են նաեւ մեր մասնաւոր ուշադրութեան ոչ թէ միայն մարդաբանական այլ եւ կենսաբանական եւ պատմական տեսակէտներով։ Պատմութեան մէջ երբեք պէտք չէ մոռացուի մի ազգութիւն որ կարողացած է պաշտպանել իւր անհատականութիւնը ներքովի եւ Շամիրամի ժամանակներէն մինչեւ մեր օրերը, պահպանելով մահա՞ք եւ իւր տիպը, սովորութիւնները, լեզուն եւ կրօնը, չնայելով որ ոչ մի ազգ, նոյն իսկ հրեայներն, չենթարկուած է այսօրոք տառապանաց։

«Չարմառք կը յարուցանէ գոյութեան կուրոյ տեսակէտէն նաեւ այս փոքր ազգի ոյժերու յարատեւութիւնն եւ տոկունութիւնն. այդ փոքր ազգութիւնն այդքան դարեր սեպածեւ միտած է հզոր ազգերու մէջ։ Կործանեցան Մեծ-Ասորեստանը, Բաբելոնն, ահագին Պարսից պետութիւնը, Պարթեաց, Մակեդոնացոց, Հռոմայեցոց տէրութիւններն, աշխարհի երեսէն բնաջինջ անհետացան մեծամեծ ազգեր, իսկ Հայոց ազգն ոչ թէ միայն կենդանի մնաց, այլ եւ լի կեանքով եւ յուսով կը տոչորի գիտութեան ծարաւովն եւ աշխատանց սիրով։ Մինչեւ այժմ եւս կը խորհի, կը զարգանէ իւր լեզուն, կ'ուսանի գիտութիւններ, առաջ կը մղէ ինքզինքն եւ այսպէս շատ բանի հասած է։

«Այս ազգը պատմութեան համար մի աւելի խորին հանելուկ է քան թէ հրեաներն եւ գնչուներն։ Այս երկու համաշխարհաքաղաքացիներն համարեա մշտնջենաւոր թափառականներ են, զուրկ հայրենիքէ, որոց համար ուր հաբարաբէն, անհայեթնէ է։ Իսկ երկրագործ հայր չէ թողած իւր Հայաստանը, Վանայ ծովակի ափերէն չէ գաղթած եւ Մասիսի ստորոտէն չէ հեռացած։ Հայ երկրագործի սերտ կապն իւր մայրենի հողի հետ կենդանի հերքումն է այն անձանց սխալին, ոյք կը գտան հայն հրեաներու հետ միասին եւ կը համարեն հայերը վաճառականական ժողովուրդ։ Ծղմարիա է որ ճակատագիրը նշանակելով Հայն, ինչպէս եւ Յոյնը միջնորդական կապ Արեւմուտքի եւ Արեւելքի մէջ, շնորհած է նոցա հաւասար յատկութիւններ։ Ճորիլի կութիւնը, հնարագիտութիւնը, մոտց նորբութիւն, բնաւորութեան տոկունութիւն թէ Հայոց եւ թէ Յունաց ընդհանուր յատկութիւններն են։ Բայց այս ամէնը բաւական չէ բացատրելու համար հանելուկն Հայոց գոյութեան մասին, այն հայերու զորս Եւրոպան սկսած է փոքր աւ փոքր ճանաչել։

«Չնայելով սոցա բազմադարեան պատմութեան, հազարաւոր արկածներու որոց ենթարկուած է այդ ազգն, այնու ամենայնիւ Հայոց տիպը կը ներկայացնէ աւելի հաստատ տոկունութիւն քան թէ Փոքր-Ասիոյ ազգերու մի որ եւ է ուրիշ տիպն, այնպէս որ ամենամաքուր արիւն պարունակող ազգերու թուոյն մէջ կրնանք գտնել եւ հայերն որոնք մի եւ նոյն ժամանակ կը հանդիսանան արիւրի մաքրութիւնը պահպանող այն չափով ինչ չափով որ նոքա ժառանգած են իրենց հայրերէն եւ պահպանէն»։

Աստուծոյ յետոյ ճանապարհորդը ձեռնառնելու կը լինի աւելի մանրամասնօրէն յիշելու առանձնայատկութիւններն եւ սեփական յատկանիշներն, ոյք մարդաբանական տեսակէտով այնպէս անջիջն եւ պարզ պահպանուած են Հայոց մէջ: Ապա, հասկառակ տարածուած ընդհանուր կարծեաց, ցոյց տուաւ ճանապարհորդն որ Հայոց նշանաւոր մաս մը նոյնպէս խարտեալ է ՕՊՈ 28: Յետ որոյ Պ. Երիսէզ մի քանի դիտողութիւններ եւս Փոքր-Ասիոյ այլ եւ այլ ազգերու մասին հաղորդելէ յետոյ ամփոփելէն կ'ընէ. հանդիսականները բուն ծափահարութեանց ուրախութիւնն էր յայտնեն իրենց գոհունակութիւնն: Այդ օրը մեծ բազմութիւն լցուած էր Կայսերական Աշխարհագրական ընկերութեան դահլիճը: Վերջ ի վերջոյ հանդիսականները կը մերձենան տեսնելու համար դահլիճին մէջ շարուած իրերու հաւաքածոյներն եւ բազմաթիւ լուսանկարները զոր ճանապարհորդը բերած էր իւր հետ Փոքր-Ասիոյ խորերէն:

ՊՈԼՍԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

ՕՐԹԱԳԵՂՅԻՆ

Օրթագեղցին, նախ Օրթագեղցի է, ապա հայ, քրիստոնէայ, լուսաւորչական, հռոմէական, Պոլսեցի: Եթէ Եւրոպայ երթայ կը ներկայանայ ո՛չ թէ իւր Թուրքիացի այլ իւր Օրթագեղցի: Երբ հարցնես իրեն թէ ի՞նչ է ազգութիւնդ. — Օրթագեղցի, կը պատասխանէ: — Կրօնքդ. — Օրթագեղցի: Ո՛ր է է օտարազգի կարող է ուրիշ երկրի մը բնիկն համարուելու ստացական իւրաւունքն ունենալ շնորհիւ օրինական տրամադրութեանց: Յրանաացի մը կրնայ ուսն լինիլ, բնու մը՝ Աւստրիացի, ամէն ուրեք naturalise լինելու պայմանները գոյութիւն ունին, բայց ո՛չ որ կարող է Օրթագեղցի naturalise լինիլ: Մարդ Օրթագեղցի կը ծնի կամ ոչ: Վաստիւրի ասիական, Մարմարայի եւրոպական ափանց բնիկ մը կրնայ Օրթագեղցի բնակիլ 50-40 տարի ուրիշ թաղեցիք գնա կը համարին կատարեալ Օրթագեղցի մը, բայց ճշմարիտ Օրթագեղցի մը միայն կրնայ նմարել նորա գէմբին վրայ, զգեստներուն վրայ, խօսակցութեանը մէջ նշանայնաց մը, մատնիշ նորա եկամուտ ծագման: Ճշմարիտ Օրթագեղցին խղճի համոզմամբ կը հաւատայ որ Աստուած Օրթագեղցին ստեղծած ժամանակ մատը ձուկորն կը դնէ եւ կ'ըսէ. «Իսկ Օրթագեղցի պիտի ծննայ»:

Ճշմարիտ Օրթագեղցին բարոյական եւ ֆիզիքական նկարագիրն ընել զժողով է, վասն զի նորա յատկութիւնները շատ բազմաբնուէն են: Հիմնապէս նա սկեսպտիկեան է: Ազգասէր է առանց մտածելու. ինչպէս կ'ուտէ, կը խմէ, կը սպառի, այսպէս ալ ազգասիրութիւն կ'ընէ բնական բերմամբ, ժողովրդական օրինօք: Միշտ եւ հանապաղ ազգային ո՛ր եւ է դործի մը գլուխն է, առանց երբեք հաւատարմութեան: Աստուծոյն հասէր է, կրթութեան պաշտպան է, բայց երբեք չխորհի իւր գոյութեան վրայ: Կրօնասէր է, մինչեւ իսկ կրօնամոլ առանց սակայն եկեղեցի երթալու. կը սիրէ, կը մեծարէ եկեղեցականներն (իւր թաղին միայն) առանց երբեք անոնց ողորմելի վիճակին վրայ կարեկցելու: Օգային, նուրբ,

շարժուն, սիրուն էակ մ'է. ամէն ուրեք տարիներ կ'եռայ. թրամուէյի մէջ, չողենալին մէջ կը ճեմէ: Բնաւ մեղմազմիկ չէ:

Ո՛ր սեռին ալ պատկանի Օրթագեղցին, իրեն յատուկ ճաշակն ունի հագուելու մասին: Բաց գոյները չսիրեր, եւ այդ գոյն կերպարաններէ շինուած զգեստները կ'արհամարհէ, «հայու ճաշակ» է ըսելով: Եւ հայ ըսելով կ'ըմբռնէ բոլոր Պոլսեցիներն, Օրթագեղցիներէն դուրս:

Կարեկցութեամբ կը խօսի Սամաթիացիին, Գում-գարուցիին, Եէնի-գարուցիին, Իւսկիւտարցիին վրայ: Քիթը բերանը կը ծռուկէ Գատը գիւղցիին անունը տըռած ժամանակ, անուշադիր է խաղաղցիին համար. կ'արհամարհէ Բերացիին թրամուէյին մէջ երկու Օրթագեղցի չեն խօսիր միմեկին մինչեւ հասնին Պէշկիթաշ ուր կը պարզուին Պէշկիթաշցիք: Էօֆ մը ընելով այն ատեն կ'սկսին խօսակցիլ: Պէշկիթաշցի միշտ անխորժ էակ մ'է իրեն համար: Ե՛նչ զարմանալի մարդիկ, կ'ըսէ Պէշկիթաշցիին համար, Օրթագեղցի այրքան մօտ են եւ դեռ ինչ են նէ ան են: Պալատցին, Ֆէնէրցին, Էյուպցին գոյութիւն չունին իրեն համար, նոյն բանն է թէ ափրիկեան վայրենիներու մասին խօսի: Իսկ իւր բոլոր հեգնական կարողութիւնը պահած է Պոլսեցի Կեսարացիին. Կեսարացին ի Պոլիս ամէն ուրեք կրցած է զետեղուիլ, բայց կարող չէ եղած արմատ ձգել Օրթագեղցի մէջ. հողը շատ նուրբ է իրեն համար:

Մաքուր հայերէն կը խօսի Օրթագեղցին. երբ տեսնէ ուրիշ թաղեցի հայ մը որ իրենին մօտ հայերէն կը խօսի, կը զարմանայ, եւ անուշ ժպիտով մը կ'ըսէ իրենէն-րուն:

— Ի՛նչ լաւ հայերէն կը խօսի, կարծես թէ Օրթագեղցի է:

Նրբ իմանայ թէ օտար թաղեցի մը դաշնամուրի վրայ ճարտարութեամբ կը նուագէ մեծ վարդապետներու գործերէն, նախ չուզեր հաւատալ, բայց երբ իւր ականջովը կը լսէ, կը ժպտի եւ խառնց նախանձու կը գովէ:

— Ի՛նչ աղէկ կը նուագէ, կարծես թէ Օրթագեղցի է:

Բայց իւր ապշութիւնն այլ եւս ուսման չունենար երբ ուրիշ թաղեցի մը ձեռք բարիգեան լրագիրներ տեսնէ: Ի՛նչպէս, Օրթագեղցի չէ՝ եւ բարիգեան լրագիրներ կ'առնու:

Բայց Օրթագեղցին իւր թագին պատուականագոյն գոհարը կը համարի բարեկրթութիւնն: Երկու Օրթագեղցիք երբ մէկտեղ գտնուին կը խօսին իրենց գիւղին քեշարութեան վրայ: Օրթագեղցական առած է թէ՛ Օրթագեղցի համար իսկ քեշար է:

Այս բարեկրթութեան սահմանը տալ գժուար է, բայց Օրթագեղցիք ունին իրենց մէջ առանդական պատմութիւն մը որ յինքն կ'ամփոփէ ամբողջ Օրթագեղցին: Ուրեմն կը պատմեն թէ՛ օր մը Օրթագեղցի կին մը — եւ ըսենք որ առաջին եւ երկրորդ գործունէներն արդէն վաղուց անցուցած էր — կ'երթայ Գարա-կէօմիւրիւ եկեղեցին թէ ուխտ ընելու եւ թէ հաղորդութեամբ համար: Հաղորդութիւն առնող բազմութիւնը շատ է եւ Օրթագեղցի տիկինն ալ իւր կ'սրգին կը մօտենայ, բերանը կը բանայ եւ հաղորդութիւնը կը ճաշակէ: Բայց երբ երեսը խաշակեցէն պիտի հեռանայ, պատարագ իջ բահանայ կը ծախ եւ կամացուկ մը կ'ըսէ:

— Հանըմ, հրամանքիդ Օրթագեղցի՞ էք:

— Հրամանք էք. ինչէ՞ն հասկցաք:

— Բերանդ բանալու շնորհալի ձեռքն:

Երբ Օրթագեղցի մը ուզէ գերագոյն գովեստը տալ ուրիշ թաղեցի մը, նաղելի եղանակաւ կ'ըսէ նմա:

— Ա՛յ, դուք արդէն Օրթագեղցի կը համարուիք:

Եւ համոզուած է որ պատուոյ այդ տիտղոսն աւելի մեծ արժէք ունի քան Պատուոյ Լէզէտի մեծ արժէքը:

ՀՐԱԶԴԱՆ

ԶԱՏԿԻ ԱՌԹԻԻ

Յոյս. — Ողջոյն ընդ քեզ. — Տպաւորութիւնք. — Մեր սրբազան երգիչք. — Հարց հաւատքը. — Ստուերներ սեղանին վրայ. — Սրբազան բեմ եւ սիրտ. — Հայքի բեմին վրայ. — Քարոզ եւ վերջաբան:

Թուշ յառաջեն ուսմանք, թող իմաստասիրեն բնագէտք, իրագէտք, տարրագէտք. թող զարգանան յանդուգն մտքեր եւ մարդուն սահմանը «ճշդեն» ըստ իրաց, ըստ տարեբաց եւ յօրինուածոյն: Յորչափ մարդ ինքնին՝ յոյժած իւր խաղաղութեանց մէջ եւ պարտեալ հոգեկան եւ մարմնաւոր մարտէն՝ կը գգայ հուսկ ուրեմն թէ ծանր է հոգն, ծանր են մահուան եւ ոչնչութեան ստուերք, Հաւատք պիտի թաղաւորեն յաւիտեան. եւ Եկեղեցին, հաւատոյ այդ Սրբաբանը, մոլորեալ մտաց, ցաւած եւ անմխիթար հոգեոց աւերակացը վրայ պիտի բարձրանայ իսպառ. հոն պիտի դառնան իմաստասիրին յուսահատ աչիւնք. հոն պիտի սլնուեն օրհասականին նուաղիտ հայեցումք: Ո՛վ Յոյս, ո՛վ Լոյս, ողջոյն ընդ քեզ:

Մեր հարց այդ հոգեոյ Տունն՝ որ դարերէ ի վեր կանգուն կ'երեւի մեր մխթանեալ փառաց եւ հոգեոյն աւերակացը վրայ, մասնաւոր առաւելութիւններ ալ ունի, Աւետարանի հետ մաղթանքներ եւ երգարան մը հրեղէն տառերով եւ լարերով զաշնակուած. աստուածային սրբութեանց հետ՝ ազգային մեծ հոգեոց ստուերներն հոն մեզ հետ կը խառնուին. եւ այսպէս՝ մինչ աստուածաշունչ հոգին զհոգիդ յերկինս կը վարէ փոթորիկեալ, ազգային սրբազան յիշատակաց անմահական բուրումը կը խնկէ գովեզ, եւ կը բաղդրացնէ վայրիկ մը գէթ դադունութիւն ա՛յն վշտաց՝ որ մեր կուրծքը կը տաշեն ու կը մաշեն: Կարելի՞ է լուծել տարրադիտական օրինօք զգացմանց այն յորդառատ զեղմունքն՝ որ քեզմէ կը բղխի. եւ զքեզ կ'ողորմէ համակ. հնար է սահմանել այն անձառեկ անզգայութիւնը՝ մինչ յանկարծ ի քթի վրայ կը յափշտակուի Աստուածութեան մը եւ հոգեկէն հակացառնէ՝ որ երբեմն իբրեւ զքեզ կ'ոխած են մարմնաւոր ստիւք այս հոգն, եւ որոց տիրեն ունիս երակացդ մէջ, որոց հոգեկան յուզումքը կ'ամբոխեն զքեզ մէկ շնչով եւ կը թրթռացնեն զհոգիդ. դաշնակի մը լարերուն պէս: Աւստի՞ կը ծնին այս խորին տպաւորութիւնք:

Ըօ՛ք՝ ինձ թէ ի՞նչ ես, ի՞նչ կը կրես երբ մեր Շնորհալին կը դաշնակէ ընթերցաց խորհրդաւոր ժամուն. տե՛ս, որչափ շնորհօք թաթխուած է երգը. ինչչափ ներշնչութիւն կ'ոգեւորէ ամբողջ գրութեան: Երգիսի՞ թեւեր կը թրթռացնէ. անմահ երգիչն: Ըօ՛ք՝ ինձ թէ ո՛ւր ես, ո՛ւր կը տանին զքեզ անզգայութեան մէջ խեղդած՝ մինչ խաշին

Մեռելոյն քովին եւ իբրեւ յաղորդարու եւ լսող այն հրեղէն քնարին՝ զոր կը նստող է թրթռուն թելերով, հրեղէն մատներով մեր Հայրապետաց վեհագոյնը, մեր պատմութեան անդադրական անձն։ Ի՞նչ եւն տոնը։ — Առաւելին մարմնով դնի ինչպէս քերականի։ Անմահութեանց տուողն է հոգի մեզա խոնարհեցաւ։ Լուծիչն երկանց քաջայայտ՝ կնքի մատանեաւ քահանայիցն։ Չոր օրհնեն զօրք երկնից՝ պահպանի ի զինուորացն։ Արեւի՛ն չլսա՛ր քոյն՝ հաւանի պատմել ի Յովսէփայ։ Բուրումն անմահութեան խնկի յեղաճեցն է զհաւանի։ — Մարդ իրաւաւ կը տարակուսի թէ արդեօք բովանդակ հնութեան եւ նորութեան մէջ՝ ունի՞նք այսպիսի շատ գրուած, որ ոճոյն սեղմութեամբն ու ինքնազարդ սարգուլթեամբն յինքեան բովանդակէ այսչափ մեծութիւն, ազդուութիւն, մեծաման անշուշտ տէրութիւն։ . . . Որչափ մեծ եւ տաւոր է Մեռեալ Աստուածութիւնն իր անարգանաց փայտովը Սիրոյ Աստուածութեան աշխեւ արիւնով թաթխուած, նայնչափ վեմացած կ'երեւի մեր երգիչ Հայրապետն իր քնարաւն այն սեւ դադաղին քովիկը։ Ա՛յ սրբազան երգիչը։

Այդ աստուածային եւ ժողովրդական աղօթարանն՝ որ անդստին իւր հաստատութեան օրէն անկաւերի եղած է մեզ, անգուգական պիտի մնայ իսպառ իր վեհագոյն սկզբանցը մէջ։ Տակաւին ցայսօր, գիտութեանց դարուն մէջ, արեւելեան եւ արեւմտեան եկեղեցիք չկրցան տօնել խղճի ազատութիւնն, որ մեր խոնարհ տաճարաց անկապտելի դարդն եղած է ի հնոց անտի ժամանակաց։ Աւետարանն ամենուն ձեռքը տուաւ։ Ժողովրդեան իրաւանց ձայնը լըսեց, եկեղեցականն իւր սահմանադիր օրինօքը վարկի եւ արժանեաց առաւելութեամբ կը պատուէ։ Աստուած ամենուն դիւրամտոյց ճանչցաւ, եւ ամեն բարեպաշտ հոգի իւր Աստուծոյն առջեւ իբրեւ եկեղեցի մը, քահանայ մը։ Ա՛յ տաճար սրբութեանց, թող փառք անշէջ մնայ։ Եւ քառաթեւ խաչը մեր հարց հաւատովն հովտնաւորէ մեր խոնջ եւ քրտնած ճակատը։

Բայց մինչ այս տալաւորութիւնը կը պաշարեն զմեզ, եւ հնութեան պատկանելի յիշատակներ կը դգուեն բարեպաշտ հոգիներն, եւ մինչ վեհափառ կամարին ներքեւ Աստուածութեան առջեւ կը դողդոջեա հաւատոյ դողովը բռնուած, չէ՞ս սրտնիր արդարակ ցասմամբ տեսնելով ստուերներ, մարմնաւոր երեւոյթներ, պաշտած սեղանիք քովերն, որք հոգի չունին, կենդանութիւն չունին։ չէ՞ս գրգռիր ներհակակիր զգացմամբ՝ երբ նոր կենաց Գիրքը կը մեռնի անհոգի չեղտերով, անհմուտ բաղխումներով։ չէ՞ս զայրանար՝ մինչ հրեղէն մաղթանքներ ու աղօթքներ կը կտրտին, կը կտրտին անգութ աղօթողին լեզուին յախուռն հարուածոցը տակ։ Ո՛հ, դառն է այս։ Պառն իբրեւ զօրինգը եւ հատու իբրեւ զուր սայր սուրբերի։ . . .

Կը փակենք այս տխուր էջը։ Զատիկ է, եւ նոր օր։ Կը վերցնենք զայն Եկեղեցւոյ սեւ վարագուրին հետ, եւ արիւնտ վերքերու վրայ կը քաշենք նոր կտաւ մը։ Զատիկ է։ այո, Եկեղեցին՝ որ դուն ուրեք լըցուած է այնպէս՝ անձուկ է այսօր հաւատացելոյ խառն բաղմութեան։ նոր օրը,

նոր հաւատը եւ ջերմեանդ ութիւն կը բերէ կարծեօ։ Կը նորոգուին սրտերը։ հոգւոյն ժանգը սրբուած է, կը թրթռան իր իր թելերը։ երկնային ըզճից բուռն հոտնք մը կը փարէ նոյն օրը Գրիստոսեայ աշխարհը։ Բայց տակաւին տոնը բաւական չեն։ Յիբաւի այդ մեծ աւաք յիշատակը ծանօթ է ամենուն։ մանկկը դպրոցէն ուսած գիտէ։ մեր Հայաստանցի աղբէրք պապերէն ուսած եւ աւանդաբար, սակայն եւ այնպէս կը պիտի դեռ բան մը։ Տղէտեւ գիտուն անհամբեր եւ լսել թէ ինչ պիտի խօսի նոյն օրը սուրբ Հայրը կամ Սրբազանը։ Պիտի շատանայ ըսելով միայն՝ թէ արդէն իսկ ծանօթ է բարեպաշտ հաւատացելոց ի Գրիստոս։ Եւ այսպէս քանի մը անհոգի բառերով, անհամ ծանուցումներով, պշրանաց եւ փետուրներու անխառն ճառատանքներով փակէ սրբազան բեմն, որոյ վրայ կանգնած եւն Մեծն Ներսէս, Սահակ Պարթեւ, Հաղպատի, Մանգակունի, Արաքիցի եւ Օշինի տղայն, Տաթեւացի եւ Արտանեցի։ Փակենք ասոնք։ վերցնենք օցս սեւ տալաւորութիւնները սեւ ծածկոցաց եւ վառադայրներու հետ։ Արդարեւ որչափ երջանիկ կ'ըլլայինք, եթէ սրտերու Հեղինակն երբեմն երբեմն մեզ յանձնէր մարդ կեղծն սրտի վարչութիւնը։ քնարի պէս թրթռացնէինք այն ատեն՝ երբ խնդալից էինք, լուեցնէ՛ երբ տխրած էինք։ Եւ կամ՝ չղնէր դոնէ այն նրբին թելիկներուն մէջ այնչափ բուռն զգացմունք, առատ զեղմունք ըզճից եւ յիշատակաց։ . . .

Եւ սակայն, հարկ է թել թէ կը վերցնենք. եւ վայրկեան մը ի բաց թօթափելով ամեն խորհուրդ, մեծ թաղի եկեղեցւոյն մէջ կը կենանք, Ս. Խաչ, Գրիստոս պողոտ(*) բարձունքը։ Հոն է Հայրիկ ամեն արարողութեանց կը մասնակցի, երգոց կը ձայնակցի։ Ընթերցումները, թէպէտեւ գրական վրայ ծած, զոց կը կատարէ։ Այո, մեր ալ դիտցած Աւետարանն է՝ զոր կ'ընթերցուէ Հայրիկ, մեր ալ ստէպ լսած եւ հասկցած աղօթքներն են, այլ իր թըրթռուն ձայնով՝ որ հոգւոյն թելերը բաղխելով այնպէս ի դուրս կ'արձակուի մաշած կուրծքէ մը, ինչո՞ւ կը թրթռացնէ զմեզ։ Իր բնական չեղտերն՝ որ իմաստից հոգւոյն թափանցմանը նշանակը են, ինչպէ՞ս չեղտակի կ'անցնին մեր հոգւոյն դոներէն ներս։ Հոն կարելի չէ հաւատացելոյ հաւատացեալն ու ջերմեանդներու ջերմագոյնը չըլլալ։ Եւ այսպէս կրօնական, գրական եւ ազգային զգացմամբ եւ յիշատակաց հոգմովն օրօրեալ կը հասնինք բաղձացեալ ժամուն, քարոզի պահուն։ Առաւելին՝ որ դուն ուրեք փայթ կը տանի պատշաճութեանց, մերթ ահագին հոտնք մը կը յարուցանէ մին զմիւսն մղելով, եւ մերթ շըշուկ մը, որ ի սկզբան անդ երկչոտ, եւ ապա ահարկու չօրնիկ կը փոխուի, տե՛ս ինչպէ՞ս հեղիկ եւ անշուշտ ունկնդրութեան կը պատրաստուի, եւ՝ եթէ կարելի ըլլայ՝ թելթեւ շնչառութիւնն ալ պիտի խեղդէ։ Հոն է, հոն, սեղանոյն առջեւ, եւ ահա ժողովրդեան դառնալով բեմին վրայ կը կանգնի Հայրիկ։

Լուծիւնն արդէն չափով մը կը կատարէ զմեզ հապա տօնին օրը, յիշատակին մեծութիւնն եւ եկեղեցւոյ շքեղութիւնն։ Ասոնց հետ ի միասին՝ երբ այսպէս սիրեցեալ քարոզիչը ալ բեմին վրայ կը

տեսնեն առ քեզ դարձած՝ արդարեւ անճառելի բերկրութեամբ կը լցուի մարդ։ Հոս հաւատացելոյ բաղմութիւնը նստած, մէկ ըով սեղան խորհրդոյ, եւ Աստուած մը այն վեհ կամարին ներքեւ։ Լուռ են ամենքն, եւ պիտի խօսի միայն քարոզիչն, Հայրիկ։ Սակայն տե՛ս որ տրտում է նա, եւ տխրութեան բոլոր հանգամանք կ'երեւին այսօր ի նմա։ կենաց աշնայի եղանակ, թօշնած դէմք եւ թառամեալ այտեր, ալեքել մաղեր ճակտին վրայ ցիր ու ցան սփռուած, ալեխառն մարմն կը լըսը վրայ կախուած։ Ըսե՛նք արդեօք թէ առ խոնջութեան տրտում կ'երեւէր Հայրիկ, եւ Աւագ չաթութեկեղեցին փաստակարեկ ըրած էր զինքն։ Ո՛վ որ հայրենի հող չէ կոխած, եւ իր հարցը չինած տաճարին ներքեւ չէ աղօթած, ո՛վ որ սիրտ չէ ունեցած, եւ իր հարց դերեղմաններուն, տնկած խաչերուն եւ սըրբանուէր ստուերացն առջեւ չէ աղօթած, անշուշտ մեզ պէս կ'ըմբռնէ այդ տխրութեան խորհուրդը։ «Հոգիս յօժար, այլ մարմինս տկար է», «Ո՛հ, չգիտեմ, ո՞ւսկից կարելի է սկսիլ Գողգոթայի սարէն, Գեթսեմանի ձորէն թէ Բեթլեհեմի մարէն»։ . . .

Կիկերուն կը պատուիրէ տեսնախօսներուն նախ ճառին բովանդակութիւնն ըմբռնել եւ ապա յառաջարանն յօրինել։ Եւ սակայն, առանց խորհելու եւ առանց ճշգրան ըմբռնուած ճառերուն յառաջարան գտնելը շատ դժուարին է եղած, ահաւասիկ պարմանալին։ Հայրիկ այդ դժուարութիւնը չկրէր մարած յառաջարան մը դրաւ նուաղ ձայնով, նայուածք մը նետեց Գողգոթայի սարը, Գեթսեմանի խորն եւ Բեթլեհեմի մութերն։ Եւ ահա դիւրացած էր ամեն ինչ։ Յիսուսի յաղթանակին ճառն սկըսաւ քրքրել աստիճանաբար ընթերցասէր հաւատացելոյ մը հարցմամբ, որ գերաբուն մարդուն Աստուածութիւնը չէր կրցած հաշտեցնել իր անսպասան խոնարհութեան հետ։ Հայրիկ իբր պատասխանի՝ ըսած է որ ինքն սքանչացած է ոչ թէ այն հրաշից վրայ, որով Հոգին ազաւակերպ ի վիայութիւն իրած էր Յորդանանու եզերքն, եւ ձայն մը կ'որոտար անհունութեան բարձունքէն, այն հրաշից՝ որով Նզիրա եւ Մովսէս ի սպաս կ'իջնէին Զիթենեաց լեռանը զլուխ, այն սքանչելեաց՝ որով զմեռեալ երիզապիղ եւ վարչամակապատ ի դուրս կը բերէր, այլ հրաշացած էր այն անհասանելի եւ անսահման խոնարհութեանը վրայ։ Հոն կը բովանդակէր Աստուածութեան մեծութիւնն, այն անօրինակ խոնարհութեան մէջ, որով այդ երկնաւոր Մարդը մանուկները գգուեց, ձկնորսները բարեկամ՝ եւ հանդերձեալ բանին քարոզ կացուց։ աղքատին բարեկամ եւ ընտանի եղու։ աննշան տընակն այցելեց, գոռոզ չնիքերը ծաղրեց, եւ «Վա՛յ Մեծատանց» կարգաց։ Եւ այսպէս առանց ծխոյ եւ մուխի կործանեց մարդկեղէն փառամուլութեան ամբարտաւան կոթողն, որ երկրի եւ երկնի մէջ կը բարձրանայ իբրեւ ամբարտալ մը անարգութեան եւ անամօթ գձձութեան։ Քարոզիչն այսպիսի իմաստներ՝ զոր յաջ եւ յաջեակ կը թափէր իբրեւ զտարափս կարկըտի, աղբերարուս հոտած ատենն՝ այլ եւս այն տ'ար Հայրիկը չէր։ վայրիկ մ'եւս, եւ ահա փոխադրած է զմեզ յերկնս, եւ Մարդեղութեան խորհուրդը, Սուրբ Գրոց սուկեղէն թելերովն առաջնորդուած, հոն կը քրքրէ։

«Բանաստեղծ օրէն խօսիմ՝ քիչ մըն ալ»։

(*) Խաչկատար։

Այս ալ կը զարմացնէ զիս . մենք այնպէս
գիտենք որ բանաստեղծական կոչում
բազմաթիւ էջերու մէջ գտնուի որք
հանգիստ մարդ . չենք ուզում տու
զիցուհեաց լեզուաւն ու շնորհ
ըլլայ . լուսին , աստղեր ի մի վայր
մենք , շառաչելն ակամքներդ կը
նեն . եւ սակայն այս ամենն ի միասին
լով , կարեւորը չենք կրնար գտնել ,
որքանքն անհոգի գիտի մըն է . չափերն
որքերը դադար մը՝ որ բարձեալ կը
տանին քերթողն հոգին . իսկ Հայրիկ
չնշառութիւն մը կ'ընէ նախ և առաջ .
մը կ'արձակէ , եւ այլ եւս այնուհետեւ
քանաստեղծէ բառին իսկական իմաստովը .
«Բանաստեղծութիւն խոստում» , ահա
աստուածունին , խորհրդոց եւ ներշնչու-
թեանց դադարները :

Երկնից մէջ Հայրը . — Որդեակ , դուն
աշխարհ պիտի իջնես . կոյս մը , նսեմ քա-
րայրին ներքեւ , մարին մէջ իր ցնցոտիներովը
պիտի փաթթէ զքեզ . Յովսէփ քեզ իրրեւ
հայր ճանչցուի եւ դու իրրեւ հիւսան որ-
դի . թագաւոր մը՝ առ մօլեգին ցամառն՝
զքեզ պիտի հաւածէ խանձարոցդ մէջ . Ե-
րեսուն երեք տարի կեանք վարէ Հրէա-
տանի մէջ . հին կրօնքն իր բոլոր կուսակից-
ներով , զինուորն ու շահերովը թող չափուի
զորութեանդ . ու զինուորացիդ դէմ՝ որք
իրենց ունկանները թողած մտադիւր քու
դրօշակիդ տակ պիտ գինուին : Քրտինքդ
նոյն աշխարհի աւազուտը պիտի թրջէ . ա-
մեն տեսակ անասունք պիտի ձագկեն
զքեզ . աղուէսն իր որջը , թռչունքն իր բոյ-
նըն ունենայ , իսկ դու եւ ոչ իսկ քար մը
լանջ եւ վաստակարեկ գլխիկդ համբար-
ցնելու . հառաչանքը սրտէդ ելնէ , եւ աղի
արցունքն աչքերդ ողողէ : — Կալուսին մի-
շեւ ո՞րք : — Ի վրանալ ժամանակին մէկ օր
եւս՝ ի զարմացումն աշխարհի բռնակալաց՝
որք իրենց պերճութեանը վրայ հպարտա-
ցած են , դահերն ու կառքերը պիտի խոր-
տակես՝ նուազող կենդանւոյ մը վրայ նըս-
տած : Երեք օր վերջն ալ՝ երեկոյնի զենջակ
սփածեալ , խոնարհ սրտիւ եւ հեղին ոգ-
ւով , չորս հազար տարուան պարտք մը պի-
տի հատուցանես . աշակերտացդ փոշոտեալ
ոտքերը լուսի , դոքս զաւակք Արքայաժող-
են , որ վաղ քու ոտքերդ լուսաց՝ մինչ դու
Մամբրէի կաղնւոյն եւ Նահապետին խո-
րանին մօտ իրրեւ հիւր նստար վարսագեղ
ծառին տակ . սրբէ , սրբէ գնոտ անիծեալ
մեղքերէն , եւ ապա վերջին ընթրիքդ կա-
տարէ . հոն է արիւնխաւած մատնիդ , թող
զիմացդ նստի . թաթխէ պատառը եւ ձեռ-
քովդ ջամբէ

«Տակաւին մինչեւ ո՞ր պիտի խոնար-
հիմն : — Դատարարաց առջեւ անխօս բա-
րեւ բռնէ՝ ձերպէս որով առաջի կտրչի իւրոյ
անմուռնչ» . հանդարտ կեցի՛ր , որպէս զի
«Եղէզն ջախջախ մի՛ բեկցի» , եւ պատրոյզն
առկայծեալ մի՛ չլջցի : Եւ այն միջին գիշերը
մահապարտութեանդ ահաւոր հանգէսը պի-
տի կատարուի . Պետրոսին սուրն ի պատեան
դարձուր . անարգանաց փայտը պատրաս-
տուած է Նախամարդոյն ոսկերացը վրայ
Գողթնի մային գլուխը . կատակ , թուր եւ
անարգանք վարդերու պէս պիտի ժողովես ,
կեանքդ զիայտէն պիտի կախուի : եւ այս-
պէս աշխարհի առջեւ նշաւակ պիտի ըլլաս . . .
— Ի մէջ երկուց անօրինաց՝ կայր մերկաց-
եալ առաւել օրինաց
«Զինուորի մը սուրը կողք պիտի փռուի եւս»

Այս պահուն տեսնելու էր Հայրիկը . ներ-
շնչութեանց ծայրն էր հասած , եւ նիւթն
այնպէս կը բրբրէր եւ այնպէս կը խօսէր՝
որ բոլորովին հոգիացեալ կը թուէր :

«Իշխան մը պիտի զրկեմ , Արեւմտացին .
նա բաւական գիտէ . կալուած մը ունի
ի նախնեաց անտի . խաչէն թող վար առնու ,
ծախող ձեռքերովդ ու օտաւըդ գերեզմանի
մէջ ամփոփեալ պիտի գրուիս : — Ո՛ր մնաց
այն խոստումը , զոր Յուդային ըրիր Յակո-
բայ բերնով . «Կրիւն առիւծու Յուդա . ի
շառախդէ ելեր , որդեակ իմ , ելեր բազմե-
ցար . նշնքեր իրրեւ դառիւ , եւ իրրեւ
գլորիւն . ո՛ր յարուցանէ գնա» : — Այո , չեմ
մոռցած . գերեզմանիդ քունը կարճ պիտի
ըլլայ . կը զարթուցանեմ զքեզ . գերեզմանիդ
վար պիտի իջնես . հասի՛ր հոգւոց զնդանն
եւ առիւծու պէս մանչելով՝ զսիւնի վրէժն՝
բանտին աղխեալ դռները . ազատէ կա-
պանքներէ գերեզմանիդ եւ այսպէս դար-
ձի՛ր յաղթական նշանաւ «որպէս այր որ
գտանէ աւար բազում» : — Ո՛ր թողես դանձն
իմ ի դժոխս եւ ոչ տացես սրբոյ քում տե-
սանել զապականութիւնն :

Նիւթն աւարտելու վրայ էր . եւ իբր
վերջաւան՝ «Օրհնեցէք մանկուհիք զանձն
երկնից , որ մահացաւ եւ գերեզմաններն
անմահութեամբ լցուց . չորացեալ կմախները
կենդանացուց . մահուն խոյթոցը լուծեց :
մահ , ո՛ր է խոյթոց քո» — Երեք անգամ
ընդհատելով նիւթն երգել տուաւ երկու
տղայոց «Օրհնեցէք մանկուհիք զյաղթողն» :
Այլին խանձեան եղբարք , ապրին Ս Խաչ
եկեղեցւոյ այժմու դպիրք : Արդէն յուզեալ
էինք եւ զօղի մէջ . երաժշտութիւնն ալ վրայ
հասաւ , եւ ահա անդգոյ մնացիք զգայու-
թեան հոտանաց մէջ , այնպէս որ չգիտայ ,
չիմացայ թէ այլ եւս ի՞նչ ըսաւ Հայրիկ եր-
կու «Օրհնեցէք մանկուհիք» ներով . բաւ մը ,
վանկ մը եւ իմաստ մը իմ չեմ յիշեր :

Յիրաւի եթէ գուշակած ըլլայի կանխաւ ,
որ նոյն օրն Հայրիկ այնպէս պիտի խօսէր ,
նիւթոյն բոլոր գլխաւոր մասունքը՝ կը հա-
մառօտէի գրչաւ : Բայց ինչ է երկրորդի
գաղափարածը խօսողին բաղդատմամբ . չը-
նար է պահել բառից կարգաւորութիւնն
ու շարքն . ինչպէ՞ս մարմնացնել այն ահաւոր
զօրութիւնն՝ որ շատ անգամ բաւ մըն է
միայն . վանկ մը եւ յետ մը՝ որ իրրեւ հը-
րեղէն մատ հոգւոյդ վրայ կը գրուի եւ կը
թրթուցնէ բոլոր թեւերը . ինչո՞վ բացա-
տրել այն անթարգմանելի «Ն՛ն» , որ մերթ-
ընդ մերթ այն մաշած կործնէն կ'արձա-
կէր . ինչպէ՞ս տարրացնել բառերով ու
տառերով այն խորհրդաւոր տրամուխինն
որ իրրեւ ստուեր ձգուած էր սրբազան
ճարտարախօսին զիմացը վրայ . ինչպէ՞ս հաս-
կըցնել իր մեղամաղձօտ նայուածքն՝ որ
մերթ շնչեալ կ'երեւի , եւ մերթ յանկարծ
բոցերով կը բռնկի :

Ո՛հ , ապրի յաւիտեան Հայրիկ , որ շա-
տերու միջինարեւելիսն է , որ Հայրենեաց
հոտ կը բուրէ , Հարց սուրբ յիշատակները
կը զարթուցանէ մեր կրօնքը տակ . կանգն
մնայ այն հսկայ հասակը՝ զոր կը սիրենք
տեսնել ախորժեկով . անշնչ մնան այն աչ-
կունք՝ որ յուսահատութեան շողով եւ յու-
սոյ նշարներով կը վառին կը մարին . համ-
բուրեմ այն աջն՝ որ գրել ու քերթել գի-
տէ , օրհնել ու խաղաղութիւն տալ գիտէ .
լուսն իր ձայնը՝ որ կը թրթուցնէ մեր հոգ-
ւոյն թեւերը , որ մեր հարց նուագներն ու

դաշնակներն եղանակել զիտէ : Մէկ օր ա-
ռաջ կ'ըսէինք թէ Հայրիկ ծերացաւ , այլ
եւս իր քարոզները կենդանութիւն չունին .
հետեւեալ առաւօտուն՝ ամենուն կարծիքը
քայքայեցաւ : Իր աղերակ մաղերուն տակ
դեռ եւս շատ բան կայ . մաշած կրծոցը
ներքեւ տակաւին շատ կրակ ընդ մխրով
կը ննջէ :

Օրը սուրբ , յիշատակը մեծ , Քարոզիչը
սուրբ . երգերն սքանչելի եւ կանոնաւոր
երաժշտութիւն . այդ օրը պիտի պահենք
իրրեւ քաղցրիկ յիշատակաց հիւսուածք մը :
Մ. ԿԻՐՈՅԵԱՆ

10 Ապրիլ 1887
Իւսկիւտար

ԱՌ ՃԵՐՈՅ

ՅԱՅԳԵՐԲԻ
(SERENADE)

Մինչդեռ լուսնի հակառակ յատակ
Յոլայ ամպոց մէջ ի մօտոյ ,
Ես գամ երգել պատշգամբի տակ
So , ուէ , մի , Քա , սօլ , լա , սի , տօ

Բնութիւնն ողջոյն հանգչի ի բուն ,
Թռչունն ուտոց մէջ կը լրտէ .
Ե՛կ յեղեղեմք ցրծագ այգուն
Ռէ , մի , Քա , սօլ , լա , սի , տօ , ուէ

Ջարբի՛ր . հոգիս սիրտսեցիկ՝
Սիրուն ժրպիտդ բմայի կամի .
Բա՛ց պատուհանդ , անգո՛ւր աղջիկ ,
Մի , Քա , սօլ , լա , սի , տօ , ուէ , մի

Յո՛յց ինձ երեսդ այն լուսաշող ,
Նուրբ ու նրկուն լանջդ որ հեւայ ,
Եւ ակամեղդ , հոգի՛ մաշող . . .
Ֆա , սօլ , լա , սի , տօ , ուէ , մի , Քա

Յո՛յց ինձ հակառակ քաղապայել ,
Եւ խաղաղիկն հերացոյ խօլ
Ջոր սիւզն այգուն գայ փայլալի .
Սօլ , լա , սի , տօ , ուէ , մի , Քա , սօլ

Սրտիկս հիւժի , հալի խաղաւ ,
Քրնարս հեծէ , հառաչէ , լայ ,
Ըսպանելով քննէ մի՛ բաւ . . .
Լա , սի , տօ , ուէ , մի , Քա , սօլ , լա

Թէ կը լրտես ձայն մ'որ՝ աղու՝
Երազիդ մէջ քեզ կը խօսի ,
Մրմունքս է որ շրքնէս հեղու . . .
Սի , տօ , ուէ , մի , Քա , սօլ , լա , սի .

Աշտիդ վերայ անուշաբայ ,
Ջերդ քրքուռ ի վերայ որդոյ ,
Թող որ հանգչի պահ մ'իմ համբայք . . .
So , սի , լա , սօլ , Քա , մի , ուէ , տօ

Հէգ եւ անցոյս գլխոյս վերեւ
Ուղղէ՛ աչքդ որ ճրքեմ վառէ ,
Իմ խաւարին՝ լոյս տօ՛ւր , Արեւ . . .
Ռէ , տօ , սի , լա , սօլ , Քա , մի , ուէ

Վարդ մ'եմ . ես գոր խնդրեմ փուշեր ,
Ծաղիկ մ'որ անցող բաւամի .
Օ՛ն , տողէ՛ գայն , այս գիշեր . . .
Մի , ուէ , տօ , սի , լա , սօլ , Քա , մի .

Մի՛ գրկանար դու առ Ազամ,
Ո՛ր դրախտածին չքնաղ եւա,
Կենաց պտուղն այն համադամ.
Ֆա, մի, ուէ, տօ, սի, լա, սօլ, ճա...:

Շնորհադէմ ես ու գեղանի.
Կրնա՞ս ուրեմն անտարբեր՝ զոյ,
Մերժել վիրացս քսպեղանի,
Սօլ, ճա, մի, ուէ, տօ, սի, լա, սօլ...:

Թէ կիմ ես՝ պէտք է որ նազիս,
Հրեշտակ ալ ես, պէտք է, ձեռնի՛ս,
Որ կարեկցիս ու... փրկես զիս...
Լա, սօլ, ճա, մի, ուէ, տօ, սի, լա...:

— Մարին ձայնս եւ աստեղի նրադ.
Մերձեցայ ժամն հաւախօսի,
Եւ չ'երեւիս դու դեռ, աւաղ...
Սի, լա, սօլ, ճա, մի, ուէ, տօ, սի...:

Բարեաւ կա՛ց, կոյս, լա՛ւ քնացիր,
Վաղն, օրուան խոյս տալէն յետոյ
Պիտ'աստ երգել զամ անձանձիր
Տօ, սի, լա, սօլ, ճա, մի, ուէ, տօ...:
ԿԱՅԾՈՒԻԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»

ՄՈՍԿՈՒԱ, 10 Ապրիլ

Կ. Պոլսէն կը մեկնինք եւ 47 ժամ նա-
ւարկելէ յետոյ ծանրաշարժ Ալեքս. զմեզ
Օտեսայի նաւահանգիստը կը ձգէ:

Նաւահանգիստն եւանկիւնի ձեւով հաս-
տատուած է երկաթէ ցիւղերի եւ յենա-
րանների վրայ ծովի երեսէն իւր 10 մետր
բարձրութեամբ: Շողոմեայ կը դէպ երբ ջու-
րի երեսին վրայ առ նաւազն մի ժամ Նրկի-
րին օրէնքն այս է: Պէտք է սպասեն ճա-
նապարհորդներն, մինչեւ որ աստիկանու-
թիւնն իւր պարագայներով չողենաւ մօտէ,
ամեն մէկի անցադրերը քննէ, անցորդներին
անուանելը, նպատակը, բնակավայրն եւ
արձանագրէ: յետոյ թոյլ տայ որ մաքսա-
տուն երթան մի առ մի իրենց բեռներով:
Արմուները մաքսատուն, խոյս տալու ելը մը
չկայ. ոստիկաններով չըջապատուած ենք:
Արքունիքն զմեզ, մեր բեռներն, ամէն մէկիս
մաքսային տուս մը կուտան: Գուրս կ'ենենք
դռնէն, ուրախ կը լինինք որ վերջապէս ա-
շտարհա՞նք: քիչ մ'առաջ կ'երթանք, մեր դէմ
կ'ենեն մէկ երկու ծաղտալ խուզարկուներ
իրենց ոստիկաններով: Քիչ մ'ալ առաջ, նո-
րէն մի եւ նոյն պաշտօնական խուզարկու-
թիւն: Ո՛րչափ տարբեր է Պոլսը:

Կ. Պոլսի նաւահանգիստէն մեկնող մէկը,
որոյ ալանջին մէջ տակաւին կ'եռան եւ
կը գոնչեն նրա խառնածայն աղմուկներն,
երբ կը մտնէ Օտեսայի նաւահանգիստը, կը
կարծէ թէ ամալի անապատի մը մէջ է: Հոս
ո՛չ այն աղմուկն եւ ո՛չ այն բազմութիւնը
կայ:

Օտեսան, նոր քաղաք քան Ռուսաստանի
այլ քաղաքներ, տարածուած է ընդարձակ
տափարակի մը վրայ: Հետաքրքիր նորեկին
զարմանքը կը գրուեն նորա խիստ լայն (ա-
ռանց բացառութեան) եւ ծառազարդ փո-
ղոցները (թէպէտ ջուր չվազեր, ինչպէս
Վանայ այգեստաններին մէջ), որոնք
երկրաշափական ճշգրտութեամբ զիրար կը
կտրեն խաչաձեւ եւ կը ձգուին, այնչափ
հեռու կը ձգուին, ուր աչք հազիւ կրնայ
հասնիլ: Շէնքերը մեծ մասամբ երկյարկանի
եւ եռյարկ են: Օտեսան իբրեւ վաճառա-

կանական եւ քաղաքակրթութեան յարմա-
րած քաղաք՝ մեծ փայլ կը վայելէ: Գեղար-
ուեստի եւ արուեստի մասին կը գերազան-
ցէ Պոլսն: Ամեն մէկ հաճախ, կառավար-
չական պաշտօնատուներ, գլխաւոր հիւրա-
նոցներ, մեծ գործարաններ եւ ազնուա-
կանների տներն հաղորդակցութեան մէջ են
իրարու հետ հեռաձայններով եւ հեռագրա-
թերով: Առեւտուրը ճոխ չէ քան Պոլսն:
Որկրամէկ չեն Օտեսայիք՝ ինչպէս են Պոլ-
սիք: Առաջիններն իրենց ճաշակին եւ ա-
խորժակին վրայ տիրող լինելով բնաւ ար-
ժանիք չեն տար այն չըջուն խաբեա-
նելի, որոնք իրենց անախորժ աղաղակնե-
րով Պոլսի թաղերը, փողոցներն եւ շուկա-
ները կը լեցնեն:

Բայց անցնինք ուրիշ նիւթի: Օտեսայի
հայ ազգաբնակչութիւնը ծագումն առած
է այն նշանաւոր գաղթականութենէն, որ
վերջին անգամ աչքը կտրելով Անիէն, Սեւ
ծովէն կ'անցնի եւ Ռուսաստանի հարաւա-
րին երկիրները կ'ապաստանի: Այն օրուէն
ի վեր Օտեսան՝ ի մէջ այլոց եւ խրիմ, Սին-
ֆեաօսը եւ դարձան առաջատարան հայ
գաղթականութեան: Բայց այն միակ տը-
լուր երեւոյթն՝ որ գլխաւորաբար այցե-
լուին զարմանքը կը գրաւէ, այս է թէ
ինչպէս շուտ մոռցեր են այստեղի այժմու
հայերն իրենց հնաւանդ սովորոյթներն: Հայ
լինելու բուն յատկանիշն հին ժամանակնե-
րէ սկսեալ մինչեւ մեր դարն, ինչպէս յայտ-
նի է շատերին, գտնել կարելի է գլխաւո-
րաբար մեր եկեղեցիների եւ նոցա ծէսե-
րին մէջ: Պոլսէն (թէպէտ Պոլսի հայերն ալ
իրենց կեղոտութեամբ նորամուտ սովորոյթներն
ունին) մինչեւ Օտեսա, ծովային փոքրիկ
միջավայր մը միայն կը կարեն, յետոյ կը
տեսնեն որ ամեն քան կերպարանափոխ-
ուած է հոս: Մինչեւ որ մօտ չերթանք
Օտեսայի հային եւ չհարցնենք իրեն ո՛ր
ազգի պատկանիլը, չենք կրնար որոշել նո-
րա՞յն թէ օտարազգի լինէին: Եկեղեցին եւ
իւր ծէսերը մեծ մասամբ ձեւուած են
ռուսականով: Հետաքրքրութիւնս գոհացը-
նելու համար ամէն օր եկեղեցի կ'երթայի:
— ասկէ դուրս ո՛ր կրնայի գտնել հայ մը:
Մէկ քանի առթիւ երկու սեռէն ալ քանի-
ներ տեսայ, որոնք կը խաչակրէին, պատ-
կերներին կ'երկրպագէին, ծուկ կը չորէն
եւ կ'երկրպագէին ռուսական ձեւով եւ
լեզուով: Ո՛րչափ շուտ կարելի է մտքերն
յեղաշրջել, Լուսաւորչականութենէ յՕրթո-
տօքսութիւն կամ հայութենէ ի պաւակա-
նութիւն վերածել վիճին մօտ կեցող անհո-
վիւ եւ անկման հակամէտ հօտն...: Հոս
հայ մայրն ո՛ր լեզուն կը նախընտրէ, երբ
իւր մանկիկին լեզուն կը բանայ, եւ երբ
անոնց կը խօսի պատմութեան վրայ,
— ռուսերէն: հայ քահանայ՝ երբ կը խօսի
քարոզ եւ կամ որ եւ է ծանուցում, ո՛ր
լեզուն կը նախընտրէ. — ռուսերէն կամ
թուրքերէն: Խառնուած գիշերը, տեղւոյս
տէր Գր. քահանայն զՔրիստոս խաչեց եւ
թաղեց թուրքերէնով: Հայ ուսուցիչն ո՛ր
լեզուն կը նախընտրէ. — ռուսերէն: Իսկ
այս ամենի հետ սպասուհին ռուս է, ծա-
ռայն ռուս է, տիրացուն եկեղեցիէն դուրս
ռուս է, իսկ ներսը տեսակ մը կցկտուր հայ:
Ամեն քան վերջացած է գրեթէ այս փոք-
րիկ գաղթականութեան համար: Նա հա-
կամեալ է աւելի (ի հարկէ անդիտակցարար).
ռուսականութեան քան հայութեան: Տեղն է
հոս հարցնել թէ ո՛ր միաց այն եկեղեցա-
կան այցելուն, որի կարեւորութիւնն այնու
չափ փաստաբանեց Նուրեան էֆ. իսկ Փա-
փաղեան էֆ. այնչափ դիմադրեց եւ ծաղ-

րեց: Չմեղը Պոլսի համար այն օրէն ի վեր
վերջացած է, իսկ արտասահման կեդրոն-
ների համար ամիսէ մը ի վեր, եւ տակա-
ւին Գուգաբուրի կեդրոնին շուրջը կը դե-
գերին եկեղեցական այցելուներ, ո՛վ գիտէ
ինչ կը նիւթեն կամ կ'երազեն: Անտարա-
կոյս ասոնց հոգը չէ թէ հայ գաղթակա-
նութիւններ կը կորչին(*):

Օտեսայի մէջ կայ մի եկեղեցի երկու
քահանայով, մի կրթարան՝ (մեր ճգնաւոր-
ների խուցերին շափ) չորս ուսուցիչներով
եւ 20-25 երկուս աշակերտներով: Իւր 120
տուն հայ ժողովուրդի վրայ միջին հաշուով
պէտք էր 120 աշակերտ ունենար դպրոցն:
Ո՛ր մնացին այնչափ աշակերտներ, յայտնի
է թէ իրենց տունների մէջ՝ այն ալ ռուս
վարժուհիները կամ գաստարականների խնա-
մակալութեան յանձնուած են:

Բայց մենք կը թողուենք Օտեսան եւ կը
մտնենք երկաթուղին:

Ս. ՅՈՎԱՆՆԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ (7)

ԱՍՏՂԱԳԵՏԸ

ԺԱ.

ՍԱԼԻԶԱՅԻ ԱՌԵԻԱՆԳՈՒՄԸ. — ԱՍՏՂԱԳԵ-
ՏԻՆ ԳԵՐԻ ԲՈՒՆՈՒԼԸ. — ՇՐԻՇԻ ԲԵՐԻԻ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Աստղագէտը բաւական ճարպիկ կերպով
պատրաստեց Սալիզան առեւանգելու ամ-
բողջ ծրագիրն: յետոյ զիշերանց մտաւ
Չուճուղի տաղաւարն եւ հաղորդեց նմա
ինչ որ կատարուած էր: Երկուքն ալ հա-
մաձայնեցան թէ ինչ եղանակաւ պէտք է
գործէին որպէս զի ատիկ չընձայեն կառ-
կածի:

Միւս օրը Չուճուղ տեսնուեցաւ Փա-
նահ խանի հետ եւ թողուութիւն խնդ-
րեց վերադառնալ իւր խումբով ի Վարան-
դա, որպէս զի տեղեկութիւն տայ իւր հօ-
րեղբորը թէ Փանահ խանի զօրքերը շուտով
իրեն օգնութեան կը հասնին: Փանահ խան
ալ յայտնեց թէ՝ առանց ժամանակ կոր-
սնցնելու ինքն ալ ետեւէն կուգայ իւր
զօրքով:

Հրաժարական ուղոյն տալով Փանահ խա-
նին Չուճուղ ճանապարհ ինկաւ, բայց մի
աւուր ուղեւորութենէ յետոյ նա յանձնեց
իւր խումբն իւր հաւատարմի մարդերէն
միայն, հրամայեց նմա գնալ Չանախչի եւ
յանձնել հօրեղբորն իւր մի նամակն: Այդ
նամակով Չուճուղ կը յայտարարէր թէ՝
գործերն յաջող կ'ընթանան եւ Փանահ խան
չորս հազար Չուճուղիցիներով տասն օրէն
իրեն օգնութեան պիտի գայ: Իսկ ինքը,
Չուճուղ, կը պարտաւորուէր երթալ Չուճա-
նիցիներու իջեւաններէն մին, ուր անցու-
ցած էր չորս տարի: Բայց թէ շուտ պիտի
վերադառնար մարտակից լինելու հօրեղ-
բորն ընդդէմ ընդհանուր թշնամոյն:

Երբ խումբը մեկնեցաւ, Չուճուղ հոտն
առած երկու հաւատարմի նօթարներ, եւ
դարձաւ եւ զարուգի ճանապարհներով
եկաւ պահուրտեցաւ այն անտառին մէջ
որ շատ հեռու չէր Փանահ խանի բնակա-

(*) Այդ գաղթականութեանց մասին էջմիա-
ծին պէտք է մտածէ:
Ս. Ի.

բանէն եւ մօտ այն լեռան ուր պիտի այցելէր Սալիհան աստղագէտին կարգադրութեանց համեմատ :

Արեգակը դեռ նոր մայրը մտած էր երբ աստղագէտն եկաւ Զուհուղը տեսնելու , եւ բերաւ Խօրասանի սաղաւարտներ ու զրահներ :

—Ո՛րքան ուրախ եւ շնորհակալ եմ քեզմէ , իմ սիրելի աստղագէտս , ըսաւ Զուհուղ , որ դու ճշգրտութեամբ կատարեցիր խոստմունքդ : Հիմա ըսէ ինձ , արդեօք սկսա՞ւ իմ նազելի Սալիհան բժշկելու հրաշալի եղանակն :

—Այսօր առաւօտուն , առաջին անգամ նա ձիով դուրս ելաւ , պտտախառնեց աստղագէտը թէեւ ես արգելեցի որ ո՛չ ոք ուղեկցի նմա , բայց կասկածամիտ Փանահ խան նստած ձիու վրայ , հեռուէն նմա կը հետեւէր աչքերովը . չկարողացայ ես հաւատարմութիւն խանին : Նորա այդ կասկածանք կ'ստիպէ զմեզ աւելի զգոյշ լինիլ : Առաւօտուն , երբ արեւը կը բարձրանայ սարի վրայ եւ ձիէն կ'իջնէ Սուրբ մատենանը կարգաւ համար , դուք ձեր նօքարներու հետ միասին կը խոնարհեցնէք ձեր սաղաւարտներու երեսակալները , կը յարձակիք յանկարծ եւ կը յախշտակէք Սալիհան : Ետագեցէք որքան կարելի է շուտ մտնել անտառն : Ես ալ նստելով Սալիհայի ձիուն վրայ կը միանամ ձեզ , Պէտք է զգուշանանք ձեր ետեւէն եկողներէն :

—Գեղեցիկ խորհած էք , անկարելի էր աւելի լաւը մտածել : Բայց չեմ գիտեր ինչու իմ սիրտս այսպէս սաստիկ կը բարբախէ : Նրբի որ դա մի ո՛րէն է զժողովրդութեան նախազգացումն է : Բայց ինչ որ ալ պատահելու լինի արդէն վճռուած բան է . . . Ես պիտի ամէն ինչ ցոյցեմ Սալիհայի փորկաթեան համար : Միայն չգիտեմ թէ ո՞ր պիտի տանիմ կինս :

—Չանխաչի , ուղիղ ձեր հօրեղբոր մօտ այս է իմ խորհուրդը : Վաղ թէ անաղան դուք պիտի յայտնէք ձեր գաղտնիքը ձեր հօրեղբոր եւ նմա ցոյց պիտի տաք ձեր կինն : Այժմ ամենայնպէս ժամանակն է : Ձեր հօրեղբայրն այժմ կը ներէ ձեզ ամէն ինչ , վասն զի յառաջիկայ պատերազմին համար կը կարօտի ձեր սուրին եւ ձեր խորհուրդներուն :

Զուհուղ համաձայնեցաւ եւ աստղագէտը վերադարձաւ Փանահ խանի մօտ :

Միւս առուր առաւօտն՝ երբ պիտի կատարուէր առեւանգումն , էր մին այն հրապուրիչ եւ չքեղ առաւօտներէն որք սովորական են ի Ղարաբաղ առաւել ամառնային եղանակներու ժամանակ : Այն ինչ ծագեցան արեգական առաջին ճառագայթները , Սալիհան նստած իւր պատուական նըժոյգին վրայ , զիմեց գէպ ի լեռն , սկսեց բարձրանալ նորա գագաթին վրայ . Փանահ խան ոչ մի կերպով չէր կարող համբերել որ հեռուէն չգիտէ նորա գործողութիւնն , ներքեւ Զուհուղ եւ նորա երկու նօքարներն յոռից ցգույս պատած զրահի մէջ եւ զէմքերին ծածկուած երկաթեայ երեսակալներով , պահուած էին թաւախիտ թուփերու մէջ : Անտի ուշադիր կը նայէին այն գործողութեան վրայ որ կը կատարուէր իրենց աչքի առաջ : Աստղագէտը գործին յաջողութիւնն աւելի դիւրացնելու համար , բռնած Սալիհայի ձիու սանձէն կը տանէր մինչեւ սարի գագաթին :

Երբ տիկինը վար իջաւ ձիէն , աստղագէտը տարածեց գորգը նորա ոտքերու տակ , որոյ վրայ ծալապատիկ նստելով ըսկսաւ կարգաւ իրենց կրօնական գիրքն : Այդ

րոպէին Զուհուղ եւ իւր երկու նօքարները թռան նժոյգներու վրայ եւ նետի նման սլացան դէպ ի նոյն լեռն : Յաջորդապէս ապշած Սալիհան իւր գրկի մէջ , Զուհուղ կայծակի արագութեամբ անհետացաւ : Կատարի խորը , Նօքարներն եւ աստղագէտն հետեւեցան նմա : Վերջինս կարողացաւ նստիլ Սալիհայի ձիուն վրայ : Տեսնելով այդ անցքը Փանահ խան , հասկցաւ որ խաբուած է եւ անմիջապէս իւր հետ եղած խուճիկով նետուեցաւ փախուստականներուն ետեւէն :

Փախուստականներն ունէին ամենալաւ ձիան եւ միջոց գտան մի քանի տասնեակ րոպէ առաջ անցնիլ : Բայց աստի , անտառին մէջ խոտորնակի պտոյտներով նօքա կ'աշխատէին այնպէս շուտ շուտ փոխել ճանապարհն որ Փանահ խան ամբողջ մի ցերեկ նոցա հետամուտ լինելէ յետոյ երկուայի բոլորովին կորսնցուց նոցա հետքերը : Բայց զժողովրդարար աստղագէտի ձին փախչելու միջոցին սայթաքուելով , նա գլորեցաւ ձիէն : Աստղագէտն այնպէս ինկաւ որ մի ոտքը մնաց ձիուն տակ : Այդ զժողովրդը ընթերցեան մէջ նա չկարողացաւ ազատիլ վերահաս վտանգէն :

Փանահ խան վրայ հասաւ իւր խուճիկն հետ եւ տեսնելով որորմելի աստղագէտն ունեցաւ գաղանային ուրախութիւն մը եւ ազադակցեց .

—Փառք սուրբ մարգարէին որ դու վերջապէս իմ ձեռքն ինկար : Խաբեալ , այդ անտառը կը լինի քու գերեզմանը . . .

Յետոյ դառնալով դէպ ի իւր խուճիկն , հրամայեց .

—Դուրս քաշեցէք այդ անիրաւը ձիուն տակէն եւ բերէք ինձ մօտ : Թէեւ մենք կորուսինք հետքերն իմ սիրելի Սալիհան յափշտակողներուն , այժմ դոնէ կ'իմանանք թէ ո՞րք էին նոքա :

Նօքարները դուրս քաշեցին աստղագէտն որ որ երկուդէն կը դողդոջար եւ բերին զնա Փանահ խանի մօտ : Խանը նստած էր ծառի մը կոճղին վրայ եւ իւր քննական նայուածքը դարձուցած էր դէպ ի աստղաբաշխը : Նորա բարկութիւնը չափ չուներ :

—Կը հասկնա՞ս արդեօք , ըսաւ նա , թէ որպիսի՞ պատժոյ արժանի ես : Կարող ես որոշել նորա չափն :

Աստղագէտն ոչինչ պատասխանեց :

—Կը հասկնամ , շարունակեց Փանահ խան , որ դու կարող չես ինքդ որոշել , լաւ , ես ինքս կ'որոշեմ : Նախ դու պէտք է յայտնես թէ ո՞րք էին այն ստահակներն որք համարձակեցան յափշտակել իմ կինս , եւ ի՞նչ նըպատակաւ : Պարզ է որ դու նոցա համարս եղած ես : Յետոյ կը մտածեմ թէ ո՞րը լաւ կը լինի , կախե՞լ զքեզ ոտքերէդ այդ անտառի մէջ զիշակեր թռչուններու կերակուր դառնալու համար թէ կենդանի թողել զեանին մէջ : Այսօր ամենայնիւ ես այնքան ներողամիտ եմ որ ընտրութիւնը քեզ կը թողում . . . : Հիմա առանց այլեւայլութեան դառնանք գործին : Սկիզբէն կ'զգուշացնեմ զքեզ որ դու ամէն մի հարցի մէջ եթէ դարձեալ աշխատիս խաբել զիս , ամէն անգամ կ'ստանաս հինգ հարկուական հարուածներ ոտքերուդ տակ : Խօսէ՛ :

Աստղագէտը շօքեցաւ ծունկերուն վրայ եւ ընտ .

—Ամենակարող խան , ես կ'զգամ թէ որքան գարշելի եղաւ իմ վարմունքս , բայց եթէ Զուհուղի իրերու հրամանատարի որդիս ձեռնութիւնը թոյլ կուտայ ինձ , կը հա-

ղորդեմ նմա ինչ որ ինձ յայտնի է : Ես ցոյց կուտամ այն բոլոր միջոցները վեհափառ խանին , որոնց հով նա կը լինի ամբողջ Ղարաբաղի պետը :

—Կրկին կ'ուզես խաբել զիս :

—Թող նոյն խի ապր րոպէին շան կերպարանք ստանա՞մ , եթէ իմ ըսածները ճշմարիտ չլինին :

—Տեսնենք , ես ի՞նչ շնորհեմ քեզ մի բանի ժամ եւս կեանք : Բայց յիշէ՛ որ եթէ պատմութեանդ մէջ սաեա , իւրաքանչիւր սուտի համար կ'ստանաս հինգ հարկու հարուած ոտքիդ տակ : Վե՛ր ելիր , ծնրադ րուծիւնդ ամենեւին չփրկեր զքեզ :

Աստղագէտն ոտքի ելաւ եւ պատմեց Զուհուղի եւ Սալիհայի ամուսնութեան վերաբերեալ բոլոր զէպքերն :

Այդ պատմութեան միջոցին Փանահ խան ոչ սակաւ անգամ կ'արտայայտէր իւր վարմանունն եւ կարեկցութիւնը Զուհուղի նկատմամբ որ գտնուած էր այդպիսի անեղ դրութեան մէջ յորմէ ստիպեալ վճռած էր նա զիմեւ ծայրայեղութեան : Վերջապէս ըսաւ .

—Կը ցաւիմ որ այդ բոլորն ես չէի գիտեր առաջուց : Եթէ գիտնայի , շատ կարելի է որ ես չցանկանայի զրկել այդ սիրարժան երիտասարդն իւր կնոջմէն , որոյ համար այնքան զոհողութիւններ յանձն առած էր : Մառայի համար ամէն պարտաւորութեանց նախադասն է հաւառարմ լինիլ իւր տիրոջը : Դու պարտքդ կատարած ես , իսկ եթէ խաբեցիր զիս , կը ներեմ քեզ ի նկատ առնելով հանգամանքներն : Հի ա՛ , դու ինձ քսէ թէ՛ ի՞նչ միջոցաւ կրնամ հասնիլ ես ամբողջ Ղարաբաղի վրայ տիրելու բարձր իշխանութեան : Հաւատո՛ւ որ ես կը վարձառքեմ զքեզ արժանաւոր կերպով :

—Թող Ալլահը եւ Սուրբ Մարգարէն առաքեն ամենազօր , ամենազօրեալ եւ ամենաբարի խանի վրայ իրենց օրհնութիւնն եւ թող բազմացնեն նորա կեանքի տարիները Մեծ ծովի աւազներու թուով : Ձեր ինձ ցոյց տուած զթուական համար , խան , ես կը հաղորդեմ ձեզ այդ նշանաւոր գաղտնիքն :

Երկապառակութիւններն որ ծագած են Խանայի մեղքներու մէջ , բոլորովին քայքայած են նոցա միտքում թիւնն : Իսկ այդ նոր սկսուող պատերազմի կը հաղթէ վերջին հարուածը , նոցա զօրութիւնն իսպառ կը թուլանայ : Ամբողջ Ղարաբաղի վրայ բարձր իշխանութիւն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ միայն մի բերդ , որ կառուցուած լինէր անմատչելի տեղ մը : Իսկ ես գիտեմ մի այսպիսի տեղ :

Չանխաչիէն տասն երկու վերսդ հեռաւորութեամբ կայ մի սար , որոյ ստորոտէն գագաթը բարձրանալու համար հարկաւոր կը լինի մէկ ու կէս ժամ : Արտափելի զառի վերներ կը տանին դէպ ի նորա ժայռոտ գագաթն : Այդ սարն երեք կողմերէն անմատչելի է բոլորովին : Երջագատուած է նա պարսպածեւ ապառաժներով , որոց ներքեւէն աղմկելով կ'որոտայ մի գետ եւ առաջուկեամբ կը վազէ քարերու մէջէն : Ահ կողմէն միայն կարելի է մուտ գործել զէպ ի սարի գագաթն եւ այդ կողմի կարելի է ամրացնել պարիսպներով : Իսկ մնացած կողմերը կը պաշտպանեն բնական ամրութիւնը : Սարի գագաթի վրայ կայ մի տափարակ տարածութիւն որոյ չըջողատն երկու ժամուան ճանապարհ կը լինի : Այդ տեղ կարելի է հիմնել մի քաղաք եւ զայն բնակեցնել քաջ պատերազմուններով : Այնու հետեւ զուրկ կը լինիք անմատչելի : Երբ թշնամին կ'ըս-

այսպէս ձեռք մի ո՛ր եւ է վտանգ, կարող էր միշտ հարուածել ձեր թշնամիները, պահելով չըջակայ բնակիչները սարսափի մէջ, եւ սուրի ոյժով կը հարկադրէք զնոսա ձեզ հպատակելու:

—Շատ գեղեցիկ եւ չափազանց լաւ մտածում է, պատասխանեց Փանահ խանը: Դու, ով աստղագէտ, թէեւ վատ բռնիքի ես, թէեւ խորեքայ ես, բայց ինչպէս կ'երեւի հնարագիտութեան մէջ խիստ վարպետ ես: Ո՛ր կը պատկանի այժմ այդ տեղը:

—Վարանդայի մեղիքին եւ որովհետեւ դուք այժմ հրաւիրուած էք նմա օգնելու, այդ պատճառաւ խիստ զիւրիկ կը լինի ձեզ պահանջել որ այդ տեղը ընծայէ ձեզ: Մի բան եւս կայ. իմ տուած խորհուրդիս համեմատ, Զուլմուդ իւր կինը պիտի ներկայացնէ իւր հօրեղործը: Դուք կարող էք գոհացում պահանջել այն յափշտակութեան մասին զոր Զուլմուդ կատարեց տուեալ գեղով Սալիհան որ արդէն ձեր կինն էր եղած: Իւր բարեկամական կապերը ձեզ հետ պահպանելու եւ իւր եղբորորդին ձեր վրէժխնդրութենէն ազատելու համար, եւ որպէս զի նա կարենայ կրկին բախտ ունենալ իւր Սալիհային ամուսինը լինելու, ես կը հաւատամ որ Վարանդայի մեղիքն ուրախութեամբ պիտի համաձայնի ձեզ ընծայել այն տեղը, եթէ դուք կ'ընդունիք զայն որպէս վարձատրութիւն ձեզ հասցուցած անպատուութեան փոխարէն:

—Դու չափազանց խելացի մարդ ես, աստղագէտ: Այն պարգեւն որուն դու արժանի ես, կը լինի քու ազատութիւնդ պատժուելէ եւ վարձատրութիւն փողերով: Դու կ'ատանաս թէ առաջինն եւ թէ երկրորդն. հետեւէ ինձ:

Նորա գնացին:

Ա. Զ. Դ.

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆ ԵՐ Ի ՂԱԼԱԹԻԱ ՍԵՂՐՈՒ ԽԱՆ, ԹԻՒ 3 ԵՎ ՊԵՐՍԻ ԿՈՂԺ Զ. Կ. ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆԸ. ԵՐ Ի ՊԱՀՃԵ-ԳԱՐՈՒ (Մաքսիմ կարգը թիւ 46) պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ այս օրէն սխալ պատրաստ են եւրոպական այլ եւ այլ լեզուներէ պատմական, մատենագրական, աշխարհագրական, մաթեմատիկական, բժշկական, եւ մանկավարժական ամեն տեսակ գրեանք եւ ամսաթերթը, ինչպէս աշխարհացոյց տախտակներ եւ ուրիշ գաղտնական կարք մը պիտոյր բերել տալ լաւագոյն գներով, մեծ թէ փոքր քանակութեամբ:

Թէ մայրաքաղաքիս եւ թէ գաւառաց մէջ գտնուող դպրոցներէն ինչպէս եւ ամեն կարգի անհատներէ յանձնարութիւնը կ'ընդունին եւ կը կատարեն ճշգրտութեամբ եւ յոյժ գոհացուցիչ պատմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել երեքշաբթի եւ չաբաթ օրերը միայն Բիւզանդեան գրատուն որ ի Ղալաթիա Սեղրոս խան թիւ 3, եւ ամեն օր Զ. Կ. Թորոսեանի գրատունն որ ի Պարսի մաքսին կարգը թիւ 46:

Ա. Ո. ԵՒ ՈՂՍ

Յաճախ կը պատահի որ կուրծքը կը յոգնի ծխախոտի մուխէն եւ շնչափողի խողովակները կը գրգռին: Այս պարագային մէջ, լաւագոյն բանն է

ՆԻԲՈՍԻՏԻ բասդիլը մը առնուլ մէն մի գլանիկէ յետոյ:

Այս հեշտահամ շաքարահատը կը զովացնէ շնչառութիւնը, կը մեղմէ խողովակաց ցաւերն եւ բարեբար ազդեցութիւն մ'ի գործ դնէ, որովհետեւ կը պարունակէ ծխախոտին դեղութիւնը եւ կը ջնջէ անոր վնասակար ազդեցութիւնները:

Նիքոսիտի բասդիլը տուփերը կը ծախուին ի գին 4 դրուշ, կը գտնուին ամեն լաւ դեղատանց մէջ: Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիա մեծ փողոց թիւ 35 (Կայարան թրամուէից):

ԻՄԴԵՐՆ ԷՃԷՆՍԻ

Գարաքէոյ, Տէյրիմէն խան, Կ. Պոլիս

Կ'առաջարկէ մեր գաւառացի ընթերցողաց իրենց հաշոյն դանձել իրենց առնելներն եւ իրենց հաշոյն վճարել իրենց պարտքերն, ինչպէս եւ իրենց հաղորդել ռաւտրական ամեն տեղեկութիւններ եւ իրենց յանձնարարութեան համեմատ ամեն ինչ գնել միջնորդէքով:



ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԽԵՐՇԵՐԵՆՕԹ ՄԵՏ՝ ՆՈՐՈԳԻՂ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկեղծութիւնէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շիշը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքագուհած մազերը իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մաքուր ծածկուեցան: Կը շուտ մը անգին թափուի մազ ունենալը: Իսկ իսկապէս խաղաղութեամբ: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոնստանտնուպոլիս Կիլիկիա Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:



ՎԵՐՄԵՆԵԿԸՆ ՆՈՒՆԿԵՓՈՒՆՑ

ԳԵՂԵՑԻԿԱՅՈՒՆՈՂ ՄԵՐՄՆՈՅ ԳՈՅՆՆԸ, ՄԵՐՍ ՆՈՒՆԿԵՓՈՒՆՑ, ՄԵՐՍ ԹԵՐՄ:

Ընդամուսն ըր փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիսներէ եւ բազմաթիւ փոշիներէ: Ընդամուսն գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեկերը եւ ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարինի փայլ: Հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Կապոնի գրգռիչ յոտակութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մերթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրութիւնը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոնստանտնուպոլիս Կիլիկիա Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի դեղագործներու քով:



ԿԵԱՆԲ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԵԶԵՐՈՒ:

ՄԵԼԻՐՈՒՅ

ՄԵԶԵՐՈՒ ՄԵԼԻ ԷՄԵԿ ՆՈՐՈԳԻՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մաշերը: Կը դադարեցունէ անոնց թափելը: Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոնստանտնուպոլիս Կիլիկիա Եօրք:



Կը գտնուի. Եւ Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղաբանը, բերա. Մեծ փողոց: Լոմբիա Գարուանա, Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալարըմ. Եւ Ի. Գիտոր Լաղանտէլա 453, բերա Մեծ փողոց: